

տուն)։ «տաղ Յովհաննու Կարապետին»։ Հեղինակն անյայտ է։

Սկիզբն ա. գրչի. «Անանիոս արքայի անունով»։

Սկիզբն Բ. տաղի. «Յովհաննէս մեծ մարգարէ, երկրպագող յարգանդէ, դու գովեցար ի տեառէ թէ նման նրմա ոչ որ է»։ Յովհաննէս Կարապետին համեմատում է բոլոր նահապետների հետ սկըսած Ագամից մինչև իւր հայր Զաքարիայի հետ ու ամեն տան վերջն աւելացնում «բայց քեզ նրման ո՛չ նա չէ»։

Թ. 40—41<sup>ր</sup>։

Տաղ սուրբ Յակոբ հայրապետին. յԱռաքել վարդապետէ ասացեալ. «Անձառ միածին հօրն երկնաւորին, ընտրեալ ի յերկրէ սուրբ յակոբ, քրորէ մարմնային»։ 16 տուն, գլխատառերը կազմում են. «ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ»։

Թ. 41<sup>ր</sup>—43<sup>ր</sup>։

Տաղ անոյշ սրբոյն Մինասայ. «Տէր բարերար հօր միածին, յիսուս, քրիստոս, որդի կուսին աղա, չանօր սուրբ Մինասին, Երմոգիենայ և զբարոսին»։ 12 տուն։

Թ. 43—44<sup>ր</sup>։

Տաղ ծննդեան սուրբ Աստուածածնին. «Ասր կոյսն ի յայրին, կայր զարձանայր, կամէր ծնանիլ կեանքս ազգի մարգկան»։ 20 տուն, բոլորն էլ սկըսում են Կ. տառով, բացի երրորդ անից, որ Զ տառով է սկսում և վերջին տունը, որ Ա. տառով է սկսում։ Ոչ միայն աների սկզբնատառերն են Կ. այլ նաև աների գրեթէ իւրաքանչիւր բառը։

Ն. Զարամեան։



## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ.

I.

ԱՌԱԿԱՆՈՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՎԱՆ ԱՆԳՐԷՆԻԻՉ ԿՈՒՂՈՎ. (Ն. Ա. Կոնյուկ մահուան 50-ամեակի առթիւ)։

Գ.

Մինչև Պետրոս Մեծը Ռուսաց գրաւոր գրականութիւնը հոգեւորականների ձեռքումն էր և կրում էր զուտ կրօնական—բարոյական գրոշմ։ Հոգեւոր երգեր, Սբ. Գրքերի մեկնութիւններ, քարոզներ՝ ահա այդ ժամանակուայ ռուսաց գրականու-

թեան նիւթը. գեղարուեստական գրուածքների մասին գեռ գաղափար չունէին։ Սակայն ժողովրդի մէջ պտտում էին և այնպիսի գրուածքներ—մեծաւ մասամբ թարգմանական—որոնք կրում էին արդէն աշխարհական—քնաւորութիւն։ Դրանք գլխաւորապէս վէպեր և վէպիկներ էին, որոնց թուում պէտք է յիշել Բիզպայի առակների թարգմանութեանց «Ստէֆանիտ և Իսնեկատ» կոչուած շատ տարածուած ժողովածուն։ Այդ ժողովածուն երեւում է Ռուսաստանում Ժե.րգ. դարում և մի երկու դարերի ընթացքում ժողովրդի սիրելի գրքերից մէկն էր։ Ժե.րգ. դարում այդ ժողովածուի տեղն է բռնում Եզովպոսի առակների թարգմանութիւնը։

Ժե.րգ. դարուց սկսած գրեթէ բոլոր ռուս երգիծարանները փորձեր են անում առակներ գրելու կամ թարգմանելու։ Այս փորձը առաջին անգամ Կանտէմիրը արու, որ 1731 թ. փոխագրեց Եզովպոսի մի քանի առակները։ Բայց նա ինքը զուրկ էր բանաստեղծական տաղանդից և գրում էր գեռ վանկական (սիդդարիկական) տաղաչափութիւնով, բոլորովին հակառակ ռուս լեզուի կազմութեան ու ոգուն։ Այս տաղաչափութեան ռուսաց լեզուին անհամապատասխան լինելը առաջինը նկատեց և ապացուցեց Տռէգիակովսկին։ Սակամենալով նմուշներ տալ նոր ձայնական տաղաչափութեան գրեց և թարգմանեց բազմաթիւ ոտանաւորներ։ Սակայն սա էլ զուրկ էր բանաստեղծական շնորհից, ուստի և նրա բոլոր ոտանաւորները, ի թիւս որոնց և նրա վեցաչափով թարգմանած Եզովպոսի առակները ծիծաղի ու սրախօսութեան առարկայ դարձան։ Ռուս առաջին գրամատուրգ Սեմաուկովը (1718—1777) մեծ հոգակ էր լուսացել ինքնուրոյն և թարգմանական առակներով։ Նախորդների հետ համեմատելով սրա առակները աւելի լաւ են. բայց այժմեան ընթերցողների տեսակէտից թէ՛ բովանդակութեան և թէ՛ ձևի կողմից նրանք շատ կոպիտ են և շատ անգամ առակներ

հմանութիւն իսկ չունին այլ լոկ գործուներ  
կնոյն Ամենայն իրաւամբ առաջին ռուս առա-  
կախօսի անունը կարող է վայելիլ՝ Խէմնի-  
ցէսը (1744—1784)։ սա ունի թէ թարգ-  
մանական և թէ ինքնուրոյն առակներ։  
Թարգմանութիւնները Ղաֆօնտէնից են և  
գերմանացի առակախօս Գէլլէրտից։ Արգէն  
այս թարգմանութիւնների մէջ երեւում են  
Խէմնիցէսի բնորոշ յատկութիւնները՝ առակի  
մէջ արտայայտելի իւր սեփական անձնական  
տրամադրութիւնը։ Եւ որովհետեւ բուն վիպա-  
կան մասը թարգմանութիւնների մէջ անհնա-  
րին է վախել՝ նա անհատական (սուրբէկախ)՝  
գոյն է տալիս խրատական մասին։ Իսկ ինչ կվե-  
րաբերի նրա ինքնուրոյն առակներին սրանք  
աւելի քնարերգական են, քան վիպական։ Նրա  
գրեթէ բոլոր ինքնուրոյն առակների բովան-  
դակութիւնը կամ ուղղակի վերցրած են նրա  
կեանքից կամ մի որեւէ կապ ունեն նրա հետ։  
Հատ անգամ արտայայտուում են նրա ներքին  
տրամադրութիւնը և մտածանքութիւնը։ Այս-  
պէս նա յաճախ ուղղւում է իւր առակների մէջ  
վճռել ինչո՞ւ յիմարը աւելի երջանիկ է քան  
խելօքը, ինչո՞ւ հարուստը թէպէտ և ան-  
խելք լինի, աւելի է յարգուում քան թէ  
խելօք աղքատը։ Սա առակախօսութեան իս-  
կական ճանապարհի վերայ է։ Բայց նա չունի  
նախառարկայականութիւն (1) օրիէկտիվիզմի  
որ անհրաժեշտ է առակախօսի համար, և  
երկրորդ՝ վառ երևակայութիւն, որ ան-  
հրաժեշտ է վիպական մասին բանաստեղ-  
ծական—աղբարանական կերպարանք տալու  
համար։ Կոխլովին հասակակից էին և ժա-  
մանակակից՝ երգիծարան Գմիտսիւնը և Խզ-  
մայովը։ սակայն սրանք Կոխլովից առաջ  
էին սկսել գրել և գեռ Կոխլովի առակ-  
ները լոյս չը տեսած առակախօսի համբա-  
ւին վայելում։ Մանաւանդ սիրով էին կար-  
գացուում Գմիտսիւնի առակները, որոնք  
մեծաւ մասամբ թարգմանական էին։ Թարգ-  
մանում էր նա Ղաֆօնտէնից, Փլօնիա-  
նից, Համօղլից և այլ ֆրանսիացի առակա-  
խօսներից։ Արա առակների գլխաւոր արժէքը

նրանումն է, որ Գմիտսիւնը—Հատ քնարայշ ճա-  
շակի աէր լինելով—գիտէր բնորութիւն ա-  
նել և առակներից ամենալաւերը թարգմանել,  
երկրորդը՝ որ նրա առակները լեզուն Հատ ճոխ  
էր, մարմը և գեղեցիկ։ Ի դուր չէ առուած,  
որ եթէ Կոստանդինը ստեղծեց արձակ լեզուն  
(պոզան) Գմիտսիւնը իւր բանաստեղծութիւն-  
ներովը ստեղծեց բանաստեղծական լեզուն։  
Ենթարկուելով ժամանակի սգուն Գմիտսիւնը  
Հատ անգամ թէ վիպական և թէ մանա-  
ւանդ և խրատական մասի մէջ սանդիմէնաւալ  
(կեղծ զգացմունքի) ոգի է մոցնում, այսպէս  
օրինակ՝ աչքի է ընկնում նրա Երկու Աղաւ-  
նի առակը, որը Ղաֆօնտէնի Les Deux Pigeons  
—առակի թարգմանութիւնն է։ մինչդեռ Ղա-  
ֆօնտէնի առակը վերջանում է երկու տղա-  
նի խրատով։ ռուս առակախօսը—տասնե-  
հինգ տղից բաղկացած խրատ է տալիս, ո-  
րի մէջ սանդիմէնաւալ գոյնով նկարագրում է  
իւր սեփական կեանքի մի գէպը և նրա-  
նից է առաջ բերում խրատը...

## Դ.

Սակայն և ոչ մէկը գրանցից չկարո-  
ղացաւ տալ ռուսաց առակներին այնպիսի  
գեղեցկութիւն և ինքնուրոյնութիւն, որ-  
պիսին տուեց Կոխլովը։ Թէպէտ սա էլ  
թարգմանութիւններ և փոխադրութիւն-  
ներ է անում, բայց նա գիտէ այնպիսի ձև  
և ոգի տալ այնպէս յաջող ժողովրդակա-  
նացնել ու ռուսացնել, որ ոչ որ չի աւելի թէ  
գրանք օտարից վերցրած առակներ են։ Քաջ  
ճանօթ լինելով բուն ժողովրդի լեզուն՝ նա  
իր գրականական լեզուն միշտ համեմատէր  
ժողովրդական ոճերով, խօսքերով, սրախօսու-  
թիւններով ու կատակներով։ Այդ է պատ-  
ճառը, որ նրա առակները այդպէս կենդանի  
են և ժողովրդի ամէն գաղափարներին էլ  
հասկանալի։

Անցնելով Կոխլովի առակների բովանդա-  
կութեանը, մենք պիտի առնենք, որ տեղի  
սղութեան պոտճառով չենք կարող մանրա-  
մասնորէն կանգ առնել նրա առակների

քննութեան վրայ, այլ կը խօսենք Կախովի արտայայտած ամենակարեւոր մտքերի մասին:

Կախովի կեանքի և բոլոր գրուածքների մէջ կայ մի ընդհանուր կապ: Նա վերին աստիճանի հետեւողական է և թէ իւր հրապարակաստական, թէ թատերական գրքուածքների և թէ առակների մէջ Կախովը միշտ ինքն իրան հաւատարիմ է մնալու: Կըռիովը իւր կեանքի մէջ ամեն ջանում միջին ծանապարհն էր փնտռում եւ այդ միջին ծանապարհովն էր ընթանում: Ուրիշներին էլ նա առաջարկում էր այդ ծանապարհով գնալ: Նա հակառակ էր ամեն տեսակ ծայրայեղութեան: Այդ միտքը նա պարզօրէն յայտնում է «Ջրասղօղներ» առակի մէջ: Չափաւորութիւն պահանջում է նա և գիտութեան մէջ, մի քանի առակների մէջ նա ծաղրում է գիտականներին, որոնք անուշադիր են գէպի կեանքի պահանջները ու գասերը: Բացօրէն ազատութիւնն էլ կարծես, նա, չի ընդունում և «Չի և Տէրը» առակի մէջ ասում է:

Ազատութեան պէս անոյշ բան չկայ՝  
Բայց ժողովրդոց մեծ վնաս կու տայ  
Թէ չափով խելքով շարունակ նոցա:

Թէ մեր և թէ Կախովի ժամանակակից կրիտիկոսները իրաւացի մեղադրում էին Կախովին այդ չափաւորութեան քարոզների համար: Չի կորելի ասել, որ Կախովի ժամանակ Ռուսաստանում գիտութիւնը ուսումը, ժողովրդի ազատութիւնը (այն ժամանակ զեռ. ճորտութիւն էր) ծայրայեղութեան հասած լինէին: Ուստի հարկ չըկար շեշտելու ծայրայեղութեան վնասների վերայ, երբ հասարակութիւնը իւր յառաջադիմական ձրգտումների համար խրախուսանքի էր կարօտ: Բայց ազգութիւնն էլ հարուածում է, նաև ծաղրում — իւր առակների մէջ: Տգէտների ամենաճիշդ և կծու նկարագրութիւնը «Կապիկ և Ակնոց» առակի մէջ ենք գտնում: Որի իմաստն այսպէս է վերջանում

Տէր մի արասցէ, թէ որ տգէտներն ոյժ ալ ունենան,  
Բարոյն փոխարէն շարք շաղջարանը՝ մեծ վնաս կուտան:

Տգէտները այն աստիճանի վնասակար են և ապերախոյ որ նրանք իրանց ազգութեան պատճառով շատ անգամ ոչնչացնում են այն լուսն և գիտութեան ազդիւրները, որի պտուղներից են իրանք օգտուում (Աղօղիին տակի խոզը):

Տգիտութիւնն էլ իւր պատճառը ունի: Կախովը արտայայտում է այն միտքը, թէ մարդս մանկութեան ժամանակ սառցած դատախարակութեան պառլ է և այն ծնողները, որոնք որ վատ են կրթել և դատախարակել իրանց զաւակներին — չպէտք է մի լուր ան սպասեն նրանցից: «Տակառ» առակի մէջ Կախովը ուզում է ծնողներին հասկացնել այդ միտքը և առակը նուիրում է ծնողներին՝

Հարեք, աղէկ նսցեցէք, այս սուսկը չը մոռնար,  
Թէ ձեր տղոց պղծաբեկոց վնասակար ուսում տար,  
Ենտղ նոցա վարքին, քարքին, խօսքերուն մէջ համարձակ,  
Անոր հոտը կը զգանաք:

Իսկ «Առիւծին կրթութիւնը» առակի մէջ Կախովը աւելի ևս պարզ է գնում իւր պահանջները, նա ասում է այստեղ, որ ամեն մի մարդ պէտք է ազգութեան, ընտանիքին և ժամանակին համեմատ դատախարակուի:

Կախովի առակներից տեսնում է, որ նա այնքան էլ անտարբեր չէր դէպի ժամանակակից հասարակական խնդիրները, որոնցից գլխաւորներն էին՝ դատաստանական վարչական բարենորոգումները, Թէպէտ և նա իւր դատախարակութեամբ գրականական ճաշակով և շատ հայեացքներով կատարինէ Ուի գարու մարդէր, բայց և այնպէս վերջիշեալ խնդիրների նկատմամբ իւր ժամանակի առաջաւոր մարդկանցից մէկն էր: «Շինող աղուէտ», «Կենդանեաց ժողով», «Գայլ և ոչխար» և այլ առակների մէջ Կախովը դուրս է բերում վարչական կազմակերպութեան բոլոր պակասութիւնները և ծիծաղելի կողմերը: Իւր տաղանդի ուղղութեամբ շատ մօտ լինելով հումորիստ Գոգօլին, նա վերջինիս նման առաջ է բերում աստիճանաւորների կաշառակերութիւնը, վարչական անձանց ազգութիւնը, պաշտօնականների ան-

գործաթիւնը և այլն, Սակայն այս հարցերում նա կարծես խոյս է տալիս արմատական միջոցներ առաջարկելուց, այստեղ նա դեռ ևս չափաւոր ազատամիտ է: Բայց ահա դատաստանական գործերի վերաբերմամբ նա արդէն բոլորովին ազատուում է իւր պաշտօնողական հայեացքներից, այս հարցերում նա գուցէ իւր ժամանակակիցներից էլ առաջ էր դնացած, որովհետեւ առաջարկում էր փոփոխել դատաստանական ամբողջ սխառեմը և չքաւականանալ մասնաւոր օրէնքներ հրատարակելով: Նա պահանջում էր այն ինչ որ միայն 60-ական թուականներում իրագործուեց Ռուսաստանում երբ որ Ալեքսանդր II կայսրը մտցրեց՝ հրապարակական արագ, բերանացի և բոլոր դատակարգների համար հաւասար դատաստանը: Այդ մտքերն է նա արծարծում «Փղին դարավարութիւնը», «Աղնուական», «Գիւղական և ոչխար» առակների մէջ: Ինչպէս և բոլոր այդ ժամանակուայ հեղինակները կոչուելով շատ քիչ է գրադուում գիւղացիների, ճորտերի գրութեամբ: Բարձրագոյն դատակարգն էլ հաղիւ է երևում նրա առակների մէջ: Գլխաւոր տեղն է բռնում միջին պաշտօնեաների դատակարգը: Բացի վերոյիշեալ առակներից, որոնց մէջ կոչուել խօսում է պաշտօնեաների տգիտութեան, անգործութեան և կաշառակերութեան մասին, կոչուել ունի և այնպիսի առակներ, որտեղ առաջ է բերում ռուսաց պաշտօնական կեանքի մէջ արմատացած վատ յատկութիւնները, որ նկարագրել էին և նրա ժամանակակից Գօգոլը — իւր «Լէվիգոս» և Գոլոբոյեգովը «Խելքից պատուհաս» կատակերգութիւնների մէջ:

Այսպէս նա ցոյց է տալիս ինչպէս հարուստը և բարձրաստիճան անձը միշտ հարստահարում են աննշան մարդուն, ինչպէս օրէնքի առաջ մեծ մարդը միշտ արգարանում է, իսկ փոքրը — բնդհակառակը միշտ մեղաւոր է դուրս գալիս: Իւր «Երկու Շուն», «Թըսթըս» և ուրիշ մի քանի առակների մէջ

նա կենդանի պատկերացնում է մեր առաջ, ինչպէս կեղծաւորութիւնը, ստորաբարձ մարդահաճութիւնը և այլն գերազասուում են ազնիւ և անձնանուէր ծառայութիւնից, ինչպէս աննշան և անբնորոշ մարդը ունենալով հօգ որ պաշտպաններ — առաջ է քաշուում իսկ աշխատասէրը միշտ մոռացուում է: Հարստահարուում:

Կոչուել օտար առակախօսներից էլ թարգմանում է միայն այն առակները, որոնք այսպէս թէ այնպէս մտն են իւր սրտին և արտայայտում են նայն մտքերը, ինչ որ և նրա ինքնուրոյն առակները:

Կոչուել մի շարք առակները գրուած են ժամանակակից զանազան գէպքերի առթիւ և զանազան «Կայլերի», «Կատունների», «Հօվիւների», տակ ծածկուում են ժամանակակից երեւելի մարդիկ, ինչպէս Նապօլէօնը, ռուս զօրավար կուսուղովը և այլն:

Այսպէս բազմաթիւ առակներով շօշափելով զանազան անցողական և մշտական հարցեր և խնդիրներ, կոչուել մինչև այժմըս ռուսացանում է ժողովրդին: Նա մերթ ժաղրւմ է մարդուն վատ սովորութիւնները և յատկութիւնները, մերթ յանդիմանում է նրան՝ նրա պակասութիւնների համար: Մերթ նա թաղում է երգիծաբանի գրիչը և քարոզիչ է դառնում ու ցոյց է տալիս ինչ է հարկաւոր մարդուն երջանիկ ապրելու համար, նա խորհուրդ է տալիս ջր թոչել շատ բարձր, եթէ բնութիւնը նրան այդպիսի յատկութիւն չի տուել, ջր գնալ այն ջրատոյղի պէս հեռու ծովի մէջ — թէ չէ կարելի է խեղդուել, միջին ճանապարհը — ահա նրա իղէալը: Նա դատում է և խօսում ժողովրդի նման, նրա փիլիսոփայութիւնը ժողովրդի փիլիսոփայութիւնն է, որը միշտ փորձը, գործնականութիւնը գիտութիւնից բարձ է դասում և որը իւր մէջ միշտ պահպանողական տարր է պարունակում:

Բայց շատ անգամ կոչուել իւր առակներով ոչ թէ ուղում է այս կամ այն խոր-

հուրդը տալի կամ իւր կարծիքը յայտնել մի որ և է ինքզինի առթիւ այլ ինչպէս և ուրիշ առականութիւնները ուղղում է միայն արձանագրել լոկ փաստը՝ իսկ եղբակացութիւն անել փաստից—թողնում է ընթերցողներին։ Բայց կան առականքի, երբ որ շատ հեշտ է երկու իրար բոլորովին հակասող եղբակացութիւններ անել։ Յիշենք օրինակի համար Նապոլեօնին պատահած դէպքը\*։ Կարգաւոր լաֆօնտէնի «Գայլ և Գառն» յայտնի առակը, նա կարծել էր, որ լաֆօնտէնը պաշտպանում է այստեղ հետեւեալ նախադասութեան միտքը, որով սկսում է առակը՝ «La raison du plus fort est toujours la meilleure».

Կամ ինչպէս հայերենումն է՝

« ուժովն քով մշտ տկարն է մոռալը »:

Մինչդեռ այս առակով թէ լաֆօնտէնը և թէ նրա թարգմանիչները ուղացել են միայն արձանագրել մի պատահումն, իրողութիւն, փաստ։ Ուստի առականքի և մասնաւորապէս կալիօլի առականքին հարկաւոր է մեծ զգուշութեամբ վերաբերուել և երեխաներին բերան անել տալիս անհրաժեշտ է ընտրողութիւն անել և բացատրել։

Մինչառ Բերքերեան։



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԱՆՑԵԱԼԸ.

( Շարունակութիւն ).

6.

73 թուականն էր, որ ստացուեցաւ կաթողիկոսական կոնգալը, որով առաջարկուում էր անյապաղ ձեռնարկել դպրանոցի բացման, թէ և դեռ կանոնադրութիւնը ոչ միայն հաստատուած, այլ և հաստատութեան ևս ուղարկուած էր։ Բայց այդ երկու տարուայ մէջ (71—73 թ.) շատ փոփոխութիւն էր եղել Նախիջևանում։ քաղաքում բազմացել էր օտարների թիւը, օտար ազգեցութիւնը ստատկացել էր և հայ հասարակութեան մէջ նոր հոսանք էր մտցրել։ Այլ ևս քաղաքը առաջուանը չէր. նոր հո-

գել նոր նպատակներ էին առաջ եկել հայ ժողովրդի մէջ։ Այն պահանջները, որ նորա առաջ ունէին, տեղի էին տուել նորերին, այն խնդիրները, որ առաջ նոցա համար մահուան և կեանքի դեր էին խաղում, այժմ արդէն կորցրել էին իւրեանց նշանակութիւնը. Նախիջևանը օտուել էր աղգային դործերից և ոտք էր դրել արդէն այն ճանապարհի վերայ, որ պէտք է հասցնէր հայ հասարակութեան և քաղաքային շահերի խտրութեան, Նախիջևանցիք մուսուլման էին տուել դպրոցի խնդիրը և զրադուած էին րեալական դպրոց ընտելու մտքով. Եւ այդ բոլորը արդիւնք էր 72 թուականին Նախիջևանի կեանքում եղած մեծ փոփոխութեան. այդ թընականին փոխուել էր հայկական «Մագիստրատը» և հաստատուել էր նոր քաղաքային վարչութիւնը— «Դուման»:

Այսպիսով ահա արգարացել էին երջանկայիշատակ Գէորգ կաթողիկոսի այն կարծիքները, որ ծնել էին նորա մաքում 68 թ. Նախիջևանը այցելելու ժամանակ. Նախիջևանը այն ժամանակ մի տեսակ անցողական դրութեան մէջ էր. արդէն զգացուում էր փոփոխութիւնների մօտենալը. նոր—նոր սկսել էր ժողովրդի ցրուելու նշանները զգալի կերպով երեւել և պարզ աչքով կարելի էր տեսնել Նախիջևանցւոց գլխին ժողովող ամպերը, և էնց այդ էր պատճառը, որ ազգասէր կաթողիկոսը այնպէս շտապեց քաղաքումս ուսումնարաններ բանալ. նա այդ աղգային հաստատութիւններով կամենում էր մի ամուր ամրաբաշխ քաշել, որի հովանու տակ կարողանար խաղաղ կերպով զարգանալ հասարակութիւնը։ Անմոռանալի կաթողիկոսը լաւ գիտէր, որ հայի նամանաւանդ զաղթական հայի յարատեւութեան գլխաւոր պայմաններն են ազգային լեզուն և աղգային եկեղեցին։ Արժանի են խորին ուշադրութեան այն խորհրդածութիւնները, որ անում է այդ մասին կաթողիկոսը իւր դպրանոցի բացման համար արձակած կոնգալներից մէկում։ «Էուսկ ուրեմն մեք, ասում է նա, ուրախագուարձ սրտիւ ախորժեմք լսել և տեսնել զյառաջագիմութիւն սիրեցեալ աղգայնոց մերոց, ուր ուրիք և գտանիցին նոքա տարամիրժեալք ըստ դառնագին արկածից քաղաքական կենաց մերոց ի հայրենի ծոցոյ, և ըստ մերովսանն կարի գործակից և խորհրդատու լինել նոցա վստն ամբելոյ զլուծ պանդխտութեան և ընդ ձեռն դպրոցաց և դպրանոցաց ի լաւ՝ անդր պայման մտաւոր և բարոյական կենաց զնոսին վերածելոյ կարևոր համարիմք . . . և այլն։ Այս գէպքում

4. Կոնդակ Գէորգայ Գ-ի տունալ յսմուն քաղաքագլխոյ Նորոյն Նախիջևանի Գէորգայ Խոջայեանի ի 25 մարտի 1874 ամի։